



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 20 ՄԱՐՏ, 2023

## ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ (միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, րուր ինձ իմաստութիւն կրարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՍԱՂՄՈՍ 25

## ԱՂԵՐՍ ՎՏԱՆԳԻ ՊԱՀՈՒՆ

**Ք**եզի կնուղեմ աղօթքս Տէր:

Քեզի վստահած եմ, ով իմ Աստուածս, թող ամօթով ջննամ,  
թող թշնամիներս չխնդան իմ վրաս:

Թող ամօթով ջննան բոլոր անոնք, որոնք քեզի կը յուսան:

Աստուծմէ հեռացածները իրենք թող ամչնան, յաշողութիւն չունենան:

Յայտնէ ինձի քու կամքդ, Տէր, քու ճամբաներդ սորվեցուր ինձի:

Սորվեցուր ինձի եւ առաջնորդէ՝ որ անխախտ մնամ ճշմարտութեանդ մէջ,

որովհետեւ դուն ես Աստուածս, իմ փրկիչ, եւ ես քեզի վստահած եմ քեզաբար:

Տէր, յիշէ որ դուն միշտ գրած ու ողորմած եղած ես, ներէ այն մեղքերն ու յանցանքները,

որ իմ մարտի տարիներուս գործած եմ,

եւ յիշէ զիս, Տէր, ողորմութեամբդ, որովհետեւ բարի ես:

Տէրը բարի է եւ ուղիղ, այդ պարճառով ալ՝

իր ճամբուն մէջ կը դաստիարակէ մեղաւորները:

Իր դատաստաններով կ'առաջնորդէ հեզերը, իր ճամբան կը սորվեցնէ անոնց:

Տիրոջ ճամբաները սէր ու հաւատարմութիւն են,

անոնց՝ որոնք իր ուխտը եւ պատուիրանները կը պահեն:

Տէր, դուն՝ որ ողորմած ես, ներէ իմ անօրէնութիւնս, որ այնքան մեծ է:

Տէրը իրմէ վախճող մարդուն ցոյց կու տայ անոր ընտրելիք ճամբան:

Անկեա միշտ երջանկութիւն պիտի ունենայ,

անոր սերունդը երկիրը պիտի ժառանգէ:

Տէրը իրմէ վախճողներուն մտերմութիւն ցոյց կու տայ,

եւ իր ուխտին պատուիրանները անոնց կը սորվեցնէ:

Ես աչքերս չեմ հեռացներ Տիրոջմէ,

որ զիս անփորձանք դուրս կը բերէ չարին ցանցերէն:

Նայէ ինձի եւ ողորմէ, որովհետեւ մինակ եմ եւ փառապետալ:

Նեղութիւններս շարճան, հանգստացուր իմ սիրտս, եւ վիշտերէս զիս դուրս բեր:

Տես փազնապս ու փառապանքս, եւ իմ բոլոր մեղքերս ջնջէ:

Տես որքան շար եմ թշնամիներս, եւ ինչ վայրագ արեւութեամբ զիս կ'ապրեն:

Պահէ զիս, փրկէ, թող ամօթով ջննամ, որովհետեւ քեզի ապաւինեցայ:

Եթէ քու աչքիդ կարարեալ եմ եւ ուղիղ՝ պահպանէ զիս, որովհետեւ ես իմ յոյսս քու վրայ դրի:

Ով Աստուած, փրկէ քու ժողովուրդդ, իր բոլոր նեղութիւններէն:

### ՃԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:*

*Ամենատարբ Երրորդութիւն, սուր աշխարհիա խաղաղութիւն:*

*Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:*

*Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:*

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*



**ԱՂԵՐՍ ՎՏԱՆԳԻ ՊԱՀՈՒՄ**

Մտերմիկ, հարազատ, սրտբաց աղօթք, դիմում, երկխօսություն Աստուծոյ հետ: Դաւիթ ամբողջական վարահութեամբ Աստուծոյ կը դիմէ, որովհետեւ Իրեն վարահած է, Իրեն յանձնուած: Այնքան վարահած է, որ նաեւ վարահ է, որ ամօթով իրի չմնայ: Նայն արքայաշարութիւնը Պօղոս Առաքեալ կընէ, ըսելով. «Աստուծոյ յուսացող սրտերը ամօթով չեն մնար»: Ամօթով չմնալու արքայաշարութիւնը, կը նշանակէ, որ աւարտին պիտի ստանան այն ինչ որ խոստացուած է, այն ինչ բանի համար որ կը յուսանք: Այսօր ալ երբ ամբողջութեամբ յանձնուած ենք Աստուծոյ, յաճախ կարծէք կասկածներ կու գան, մեզ շփոթեցնելու, բայց վարահ ըլլանք, ու վարահութիւնը ունենանք, որ Աստուծոյ տուած խոստումը պիտի իր լրումը եւ կատարումը ունենայ: Դաւիթ ոչ թէ միայն իր պարագան, այլ նաեւ կը յիշէ բոլոր անոնք որոնք նոյն հաւաքքով եւ վարահութեամբ Աստուծոյ յանձնուած անոնք եւս ամօթով չմնալու, այլ անոնք, որոնք չեն վարահած Աստուծոյ: Առիթով մը Դաւիթի թշնամիները պիտի արքայաշարութիւն ըսելով. «Աստուծոյ վարահեցաւ, տեսնենք եթէ պիտի գայ ազատելու»: Այս արքայաշարութիւնը, սակայն մարգարէութիւն մըն էր կապուած Քրիստոսի, երբ Քրիստոս խաչափայտին վրայ, ներկաները այսպէս կ'արքայաշարութիւն ըսելով. «Աստուծոյ վարահեցաւ, տեսնենք պիտի գայ ազատելու զինք»: Այսօր ալ մենք, երբ ամբողջական վարահութեամբ Աստուծոյ կը դիմենք, եւ Անոր կապուած ու վարահած ենք, բայց նաեւ նեղութեան ու դժուարութեան մէջ ենք, շարքեր կու գան ըսելու, Աստուծոյ կը հաւաքայ, Անոր կը վարահի ու կը յուսայ, բայց տես, նեղութեան ու դժուարութեան մէջ է: Անոր համար ալ, յաջորդ նախադասութիւնը կու գայ այդ հարցումին պարասխանը տալու, երբ կ'ըսէ. «Յայտնէ ինձի քու կամքդ, Տէր, քու ճամբաներդ սորվեցուր ինձի: Սորվեցուր ինձի եւ առաջնորդէ՝ որ անխախտ մնամ ճշմարտութեանդ մէջ, որովհետեւ դուն ես Աստուածս, իմ փրկիչ, եւ ես քեզի վարահած եմ տեսար»: Այո, երբ նեղութեան եւ դժուարութեան մէջ ենք, յաճախ անել կացութեան վիճակ մըն է որ կը տիրէ, եւ այդ վիճակին մէջ յաճախ կու գանք հարցնելու այն հարցումը, թէ արդեօք Աստուած ինչ կ'ուզէ ինձմէ, ինչ է Աստուծոյ կամքը: Երբ մանաւանդ այդ կացութիւնը երկար կը տեսէ, եւ կարծէք անվերջանալի:

Դաւիթը իր անցեալի փորձառութեան լոյսին տակ, վայելով Աստուծոյ ողորմութիւնը եւ գութը, դարձեալ կը դիմէ, ըսելով. «Յիշէ, որ գթած ու ողորմած ես»: Ոչ որովհետեւ Աստուած Իր ողորմած կամ գթած ըլլալը չի գիտեր, այլ Դաւիթ ինքզինքին կը յիշեցնէ, եւ այդ յոյսով Աստուծոյ կը դիմէ, թէ ինչպէս անցեալին, նաեւ այսօր ալ նոյն ողորմութիւնը եւ գթութիւնը ցուցաբերէ Աստուած իրեն նկատմամբ: Որովհետեւ ինչպէս անցեալի պարանեկութեան, երկրասարդութեան ժամանակ յանցանքները ներեց, հիմա աւելի յառաջացած փարիքին ալ իր անօրէնութիւնները ներէ ու ջնջէ: Այնպէս չէ, որ եթէ Աստուած անցեալին մեր յանցանքները ներեց, այո, ալ վերջ, յանցանք չենք գործեր: Ընդհակառակը, ամէն փարիքի, ունինք մեր յանցանքներն ու անօրէնութիւնները, որոնց համար ալ Աստուծոյ կը դիմենք, որ նոյն ողորմութեամբ եւ գթութեամբ նայիր, եւ այդ հաւաքքն ու վարահութիւնը որ ունինք Աստուծոյ նկատմամբ, մեզ ամօթով չի ձգեր:

Ապա Դաւիթ կ'արքայաշարութիւն ըսելով. «Տէրը բարի է եւ ուղիղ, այդ պարճառով ալ՝ իր ճամբուն մէջ կը դաստիարակէ մեղաւորները: Իր դատաստաններով կ'առաջնորդէ հեզերը, իր ճամբան կը սորվեցնէ անոնց: Տիրոջ ճամբաները սէր ու հաւաքարմութիւն են, անոնց՝ որոնք իր ուխտը եւ պարտիրանները կը պահեն»: Աստուած այնքան բարի է ուղիղ է, որ փոխանակ պարժելու մեղաւորը, ընդհակառակը, կը դաստիարակէ, եւ Իր ճամբան կը սորվեցնէ: Եզեկիէլի մարգարէին պիտի ըսէ Տէրը, «Ես մեղաւորին մահը չեմ ուզեր, այլ անոր դարձը եւ փրկութիւնը»: Բայց այս բոլորը անոնց նկատմամբ, որոնք հեզութեամբ, խոնարհութեամբ, Աստուծոյ կը դիմեն, կ'անդրադառնան, ու կը վարահին Աստուծոյ ողորմութեան, մանաւանդ՝ երբ կը գիտակցին, որ Աստուած Մէր եւ հաւաքարմութիւն է: Առաւել եւս, երբ Աստուծոյ երկիւղը ունիմ, Աստուած նաեւ պարտաստ է ինձի սորվեցնելու իմ ընտրելիք ճամբան եւս: Տէրը նաեւ մտերմութիւն ցոյց կու տայ, հարազատութիւն:

Դաւիթ անգամ մը եւս, կրկնութեան գնով կու գայ յայտնելու, որ իր աչքերը երբեք պիտի չհեռացնէ Տիրոջմէն: Ինչպէս Պօղոս Առաքեալ կ'արքայաշարութիւն ըսելով. «Ձեր հաւաքքի պիտոյեանին նայեցէք, Յիսուս Քրիստոսին»: Եւ հայեացքը կեդրոնացնել կը նշանակէ մնայուն Անոր նայիլ, որովհետեւ անգամ մը որ մեր հայեացքը շեղի, մենք կը շեղինք: Այնպէս ինչպէս ինքնաշարժ քշելու ժամանակ, երբ մեր հայեացքը ուղիղ ճամբէն կը շեղի, միշտ վրանգը, արկածը պարտաստ է պարահեղու: Անոր համար ալ որքան զգուշութեամբ կը քշենք: Եւ ինչ է նպատակը ջշեղելու, որովհետեւ Աստուած զինք դուրս պիտի բերէ անփորձանք չարին ցանցէն: Ինքաբարբաղական է, որ Դաւիթը կը

գիրակցի որ պիտի ունենայ նեղութիւն եւ դժուարութիւն, չարը պիտի փորձէ իր ցանցին մէջ առնելու զինք, բայց քանի իր հայեացքը չէ շեղած, Աստուած զինք դուրս պիտի բերէ: Կրկնութեան գնով անգամ եւս, կը խնդրէ Աստուծմէ որ ներէ, ջնջէ, հանգստացուր սիրտս, պահէ, պահպանէ: Ինչո՞ւ, որովհետեւ Քեզի ապահանած եմ, Քեւ վրադ դրած եմ իմ յոյսս: Կաւարտէ իր աղօթք խնդրանքը, որպէս ներկայացուցիչը Աստուծոյ ժողովուրդին, ըսելով. «Ով Աստուած, փրկէ ժողովուրդդ, իր բոլոր նեղութիւններէն»: Եսէն մենքի կը վերածուի աղօթքը: Որովհետեւ իր ունեցած նեղութիւնները, նաեւ իր ժողովուրդին նեղութիւններն են: Այսօր միայն ես չեմ, կամ միայն դուն չես որ նեղութեան ու դժուարութեան մէջ ենք, այսօր ես, վաղը՝ դուն: Բայց ի վերջոյ, իմ նեղութիւնս, նաեւ քու նեղութիւնդ: Այսօր ինձի համար աղօթք խնդրանքը, նաեւ քեզի համար, եւ փոխադարձ: Թող ողորմած ու գթած Տէրը, լսէ մեր աղօթքը եւ ողորմի բոլորիս:

**Պահապան ամենայնի Քրիստոս,**  
*աչ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*